ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 17

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Նոր Ամանոս բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Աշտարակ համայնքի (Նոր Ամանոս բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (*Նոր Ամանոս բնակավայրը*) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (Նոր Ամանոս բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-076-0016-0004 կադաստրային ծածկագրով 0.12 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	02-076-0016-0004 կադաստրային ծածկագրով 0.12 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կապի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից նշված պահանջը (կցվում է):

4. Աշտարակ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Նոր Ամանոս բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (Նոր Ամանոս բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի աշխատանքային պարտականությունները կատարող		
		Լ.Սարգսյան

Երևան «22» հունվարի 2025 թ.